ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N 0705-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի տեղակալ Խ. Մկրտչյանի 06.04.2023 թվականի թիվ 2147 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 01 բաժնի 1 խմբի 1 դասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի համայնքապետարանի ծախսերի «Տրանսպորտային նյութեր» 4264 հոդվածի պլանը պակասեցնել 1613.1,0 հազար դրամով և ավելացնել «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252 հոդվածի պլանին, համայնքին պատկանող տրանսպորտային միջոցները նորոգելու և պահպանելու ծախսերը կատարելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի և ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. մայիսի 18
ք. Արմավիր